

Հավելված 8

ԵՊՀ ԻՄ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի

2016-2017թթ. ուս տարվա հաշվետվություն

2016-2017թթ. ուս. տարվա ընթացքում ԵՊՀ ԻՄ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, իրականացրել է մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- 2016թ. դեկտեմբեր ամսին անց է կացվել 2015-2016թթ. ուս. տարվա շրջանավարտների հարցում (արդյունքները՝ Հավելված 1-ում),

- Հանդիպում Զբաղվածության պետական գործակալության տարածաշրջանային կենտրոնի աշխատակցի և ԵՊՀ ԻՄ ուսանողների հետ,

- Հանդիպում <<Դասավանդի՛ր, Հայաստան>> (Teach for Armenia) ՀԿ-ի ներկայացուցիչների և մասնաճյուղի ուսանողների հետ,

- Հանդիպում Ֆինանսական համակարգի հաշտարարի և ԵՊՀ ԻՄ ուսանողների հետ,

- Կենտրոնը Տուրիզմի ամբիոնի հետ օժանդակել է Տուրիզմի հետազոտական և զարգացման կենտրոնի ձևավորման համար ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող աշխատանքներին: Կազմակերպել է հանդիպում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների և ՄԱԶԾ <<Գյուղական Զբոսաշրջության Ինտեգրացված Զարգացում>> ծրագրի ներկայացուցիչների հետ, մասնակցություն է ունեցել նրանց կողմից իրականացված դասընթացների կազմակերպական աշխատանքներին:

- ՄԿՈԱ բաժնի հետ առցանց եղանակով անց է կացվել ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարարվածության հարցում, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ստացած կրթությունից առկա ուսուցման բաժնի շրջանավարտների բավարարվածության հարցում, /հեռակա ուս. բաժնի շրջանավարտների հարցումը դեռևս ընթացքի մեջ է/,

- Ստեղծվել է ԵՊՀ ԻՄ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ֆեյսբուքյան էջ՝ նպատակ ունենալով ուսանողների և շրջանավարտներին ավելի մատչելի դարձնել կայքում տեղադրվող թափուր աշխատատեղերի, փորձնակության (ինտերնշիփ), կրթաթոշակների և նմանատիպ այլ ինֆորմացիան:

- Պարբերաբար թարմացվում է ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքում առկա, շրջանավարտների կարիերային նպաստող տեղեկատվությունը. 2016թ. դեկտեմբերից

2017թ. հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում տեղադրվել են շուրջ 40 հայտարարություն մարզում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ, որ հիմնականում վերաբերել են ֆինանսական և կրթական ոլորտերին, 5 հայտարարություն՝ ինտերնշիփի հնարավորության մասին ,որ վերաբերել են ֆինանսական, սպասարկման և տուրիզմի ոլորտներին, ինչպես նաև բազմաթիվ հայտարարություններ՝ կրթաթոշակների, ուսման վարձի փոխհատուցման, այլ ծրագրերի մասնակցության վերաբերյալ:

- ՄԿՈԱ բաժնի հետ իրականացվել է հարցում ԵՊՀ ԻՄ արտաքին շահակիցների՝ մասնաճյուղի շրջանավարտներից բավարարվածության վերաբերյալ:

*ՄԿՊԿ բաժնի Շրջանավարտների և արտաքին շահակիցների
հետ տարվող աշխատանքների համակարգող Արփինե Եզանյան*

Հավելված 1.

**2015-2016թթ. ՈՒՍ.ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՐԱԾ
ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

2016 թվականի դեկտեմբերին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների և կարիերայի կենտրոնը անց է կացրել հարցում 2015-2016թթ. ուս.տարվա առկա և հեռակա ուս. բաժինների շրջանավարտների շրջանում: Հարցման նպատակն էր պարզել, թե շրջանավարտների քանի տոկոսն է կրթությունը շարունակել մագիստրատուրայում, քանի տոկոսն է անցել աշխատանքի (մասնագիտությամբ կամ այլ աշխատանք): Փորձ էր արվել պարզել այն պատճառներն ու պայմանները, որոնք խանգարում են շրջանավարտների աշխատանքի տեղավորվելու գործընթացին:

**ԵՊՀ ԻՄ 2015-2016թթ. ուս. տարվա շրջանավարտների հարցման ամփոփ
տվյալները**

	Ընդհանուր թվաքանակը	Աշխատողներ	Մասնագիտու- թյամբ աշխատողներ	Մագիստրատու- րայում ուսանողներ
Առկա ուս. բաժնի շրջանավարտներ	185	48	23	38
Հեռակա ուս. բաժնի շրջանավարտներ	156	87	17	4
Ընդամենը ուսանողներ	341	135	40	42

Հարցմանը մասնակցած 2015-2016թթ. ուս. տարվա 341 շրջանավարտների շուրջ 55%-ն ավարտել է առկա ուսուցման բաժինը, 45 %-ը՝ հեռակա ուսուցման: Շրջանավարտների շուրջ 40%-ն աշխատում է, որոնց 36 %-ն ուսանել է առկա, 64 %-ը՝ հեռակա ուս. բաժնում: Ընդ որում՝ շրջանավարտների ընդհանուր քանակի 12 %-ը աշխատում է մասնագիտությամբ, որոնց 58 %-ն առկա ուս. բաժնի շրջանավարտներ են, 42%-ը՝ հեռակա: Աշխատող շրջանավարտների մեծամասնությունը հեռակա


ուս. բաժնում են սովորել, պայմանավորված այն հանգամանքով, որ այստեղ ուսուցման ձևն ավելի մատչելի է աշխատանքի հետ համատեղելու նպատակով, և ուսանելու տարիներին արդեն նրանք աշխատանք են ունեցել: ԵՊՀ ԻՄ շրջանավարտների 12%-ը շարունակում է ուսումը մագիստրատուրայում, որոնց 91%-ը առկա ուս. բաժնի շրջանավարտներ են, 9%-ը հեռակա ուսուցման բաժնի:

2015-2016թթ. ուս. տարվա առկա ուս. բաժնի շրջանավարտների հարցման արդյունքներն ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Ընդհանուր թվաքանակը	Աշխատողներ	Մասնագիտությամբ աշխատողներ	Մագիստրատուրայում ուսանողներ
Հայոց լեզու և գրականություն	24	7	5	2
Մանկավարժություն և հոգեբանություն	8	2	2	2
Պատմություն	23	7	3	4
Կիրառական արվեստ	31	11	4	-
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	13	3	1	2
Սերվիս	18	6	1	1
Տնտեսագիտության տեսություն	35	7	6	15
Անգլերեն լեզու և գրականություն	24	3	1	10
Ֆրանսերեն լեզու և գրականություն	9	2	0	2
Ընդամենը	185	48	23	38

2015-2016թթ. ուստարվա հեռակա ուսուցման բաժնի շրջանավարտների հարցման արդյունքներն՝ ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Ընդհանուր թվաքանակը	Աշխատողներ	Մասնագիտությամբ աշխատողներ	Մագիստրատուրայում ուսանողներ
Բնապահպանություն և բնօգտագործում	30	14	-	1
Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	18	12	-	-
Հայոց լեզու և գրականություն	19	7	1	-
Մանկավարժություն և հոգեբանություն	29	21	11	2
Պատմություն	30	16	1	-
Տնտեսագիտության տեսություն	30	17	4	1
Ընդամենը	156	87	17	4



Հեռակա ուս. բաժնի շրջանավարտների 56%-ն աշխատում է, ընդ որում՝ 11%-ը մասնագիտությամբ, շուրջ 3%-ը ուսումը շարունակում է մագիստրատուրայում: Աշխատող շրջանավարտների մեծ մասը նախքան ուսանելը և ուսանելու տարիներին արդեն ուներ զբաղվածություն:

Աշխատանք փնտրող շրջանավարտները հիմնականում նշում էին աշխատաշուկայում երիտասարդ կադրերի նկատմամբ պահանջարկի բացակայության խնդիրը (մասնավորապես մանկավարժության ոլորտում):